Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների
վերապատրաստման դասընթաց 2023

Ավարտական հետազոտական աշխատանք

Հետազոտության թեման՝ <<Ընտանիքի հոգեբանություն, կոնֆլիկտներ>>

Առարկան՝ Հ. լեզու և գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝ Լիլիթ Գրիշկյան

Ուսումնական հաստատություն՝ Մ. Մելքոնյանի անվան հ11 հիմն. դպրոց

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն———————————————————————————————— 3

Գլուխ 1.Ժամանակակից ընտանիքում երեխայի դաստիարակության հիմնահարցերը

1.1 Ընտանիքի բնութագիրը ——————————————————————— 7

1.2 Ընտանիքի տեսակները——————————————————————— 11

Գլուխ 2. Ընտանեկան կոնֆլիկտների տեսակները և դրանց պատճառները

2.1 Ընտանեկան հոգեբանություն, կոնֆլիկտներ——————————————— 14

2.2. Ընտանեկան կոնֆլիկտների ազդեցությունը երեխայի անձի ձևավորման վրա——————————————————————————————— 15

2.3 Երեխայի պահվածքը, վերաբերմունքը և մոտեցումները——————————— 16

Եզրակացություն——————————————————————————— 18

Օգտագործված գրականության ցանկ——————————————————— 20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մարդու զարգացման վրա, առավելապես մանկության տարիքում, մեծ ազդեցություն ունի ընտանեկան միջավայրը:

Ընտանիքը՝ որպես մարդկային սոցիալական կեցության հիմնական ձև, մոդել և համայնքի կառուցվածքային միավոր, համարվում է պետական հոգածության առարկա:

Ընտանիքը հասարակության՝ ամուսնությամբ կամ ազգակցական կապերով կապված, համատեղ ապրող, միմյանց համար բարոյական պատասխանատվություն կրող անդամների կողմից ձևավորված սկզբնական կառույց է:

Ընտանիքի՝ որպես անձի սոցիալականացման առաջնային ինստիտուտի կարևորագույն գործառույթը աճող սերնդի դաստիարակությունը, զարգացումն ու սոցիալականացումն է: Նրանով են պայմանավորված հասարակության վերարտադրության, աճող սերնդի դաստիարակության, սոցիալականացման, նյութական ապահովության, հոգևոր կայուն զարգացման իրականացման հնարավորությունները:

Ընտանիքն է այն փոքր միջավայրը, որտեղ երեխան անցկացնում է կյանքի առաջին՝ իր զարգացման համար էական տարիները: Ընտանիքով է պայմանավորված նրա հետաքրքրությունների, պահանջմունքների, սովորույթների, հայացքների և արժեքային համակարգի ձևավորումը: Դաստիարակչական ներգործության արդյունավետությունը պայմանավորված է ընտանեկան դաստիարակության գործընթացի հումանիստական պահանջկոտությամբ, նպատակաուղղվածությամբ, համակարգվածությամբ և երեխայակենտրոն ղեկավարմամբ: Բոլոր ժամանակներում էլ ընտանիքում տարբեր պատճառներով ծագել են կոնֆլիկտներ, որոնք ազդում են ընտանիքի հոգեբանական մթնոլորտի վրա, քայքայում հարաբերությունները, առաջացնում սթրես, տհաճ հոգեվիճակներ:

Սոցիալ–մանկավարժական և հոգեբանական հետազոտությունները ցույց են տալիս, որ ընտանեկան դաստիարակության՝ հարգանքի և վստահության վրա հիմնված ոճերը, ծնողների հեղինակությունը, ընտանիքում երեխայի հետ շփման առանձնահատկությունները նպաստում են ներընտանեկան կապերի ամրապնդմանը, բարոյական բարձր պատասխանատվության մթնոլորտի, փոխօգնության ավանդույթների ձևավորմանը:

Այսօր ընտանիքի ազդեցությունը դպրոցականի հոգեկան աշխարհի վրա շատ արդիական է, քանի որ հասարակական կյանքի արագ փոփոխությունների արդյունքում կրթության և դաստիարակության աղճատվածությունը, տեղեկատվության ծավալն ու ինտենսիվությունը (ԶԼՄ–ների հաղորդումները, որոշ ընտանիքներ կրոնական հավատալիքների մուտքը), համակարգված գիտելիքների պակասը, կոնֆլիկտները հանգեցնում են երեխայի ներաշխարհի աղճատմանը: Ստեղծված իրավիճակում կարևորվում և խիստ արդիական է դառնում ընտանեկան դաստիարակության ազդեցության շեշտադրումը, կոնֆլիկտների նվազեցումը:

Աշխատանքում նկարագրված են ընտանեկան կոնֆլիկտների տեսակները, դրանց առաջացման պատճառները և դրանց բացասական հետևանքները երեխայի անձի ձևավորման վրա:

Թեմայի արդիականությունը: Երեխայի անձի ձևավորումն առաջին հերթին տեղի է ունենում ընտանիքում, և ընտանեկան մթնոլորտը, հարաբերությունները, դաստիարակությունը վճռորոշ ազդեցություն են ունենում երեխայի ներդաշնակ զարգացման, հոգեկան առողջության վրա:

Ընտանիքի դերը երեխայի հոգեկան առողջության պահպանման գործում արդիական է հատկապես այն պայմաններում, երբ ընտանիքում հաճախակի են առաջանում կոնֆլիկտներ:

Հետազոտության նպատակն է՝ բացահայտել ընտանիքը՝ որպես դպրոցականի ճանաչողական գործունեության բարելավմանը նպաստող միջոց,

ուսումնասիրել ընտանիքում առկա կոնֆլիկտների ազդեցությունը երեխաների հոգեբանության վրա:

Հետազոտության խնդիրներն են՝

1.Ներկայացնել ժամանակակից ընտանիքում դաստիարակության հիմնահարցերը

2.Բացահայտել ընտանիքի բնութագիրը, ընտանիքի տեսակները

3.Ներկայացնել ծնողի և դպրոցականի փոխահարաբերությունները ժամանակակից ընտանիքում

4.Հետազոտել երեխայի սոցիալական կարգավիճակի գործոնը կոնֆլիկտների հետ կապված վախերի և տագնապների բնույթի վրա

5.ՈՒսումնասիրել ընտանիքի ազդեցությունը դաստիարակության և ուսուցման գործընթացում

6.ՈՒսումնասիրել ընտանիքի ներգրավվածությունը դպրոցականի ուսուցման գործում

Հետազոտության օբյեկտը

Դպրոցական տարիքի (9–15տ) երեխաներն են և նրանց ընտանիքները:

Հետազոտության առարկան

Ընտանիքի գործունեությունն է դպրոցականի ճանաչողական հատկությունների զարգացման ուղղությամբ և երեխայի և կոնֆլիկտների հետ կապված տագնապների կանխարգելման առանձնահատկություններն են:

Հետազոտության մեթոդաբանությունը: Հետազոտության մեթոդաբանական հիմք են հանդիսացել մանկավարժոգեբանական մի շարք տեսություններ, ինչպես նաև ընտանիքի և ընտանեկան դաստիարակության վերաբերյալ ականավոր մանկավարժների գաղափարները ինչպիսիք են՝ Լ.Ա. Կուլիկը, Պ.Ֆ. Լեսգաֆտը և Պ.Ա. Լեբեդևը:

Հետազոտության գիտագործնական նշանակությունը

Հետազոտության գիտական նշանակությունն այն է, որ վերլուծվել են ընտանիքի տեսակները, դրանցում իրականացվող ուսումնադաստիարակչական գործընթացը, կոնֆլիկտների ազդեցությունը երեխաների վրա, բացահայտվել դրանց առանձնահատկությունները, իսկ գործնական նշանակությունն այն է, որ ստացված արդյունքները կօգնեն երիտասարդ ծնողներին և մանկավարժներին համագործակցության միջոցով ուսումնադաստիարակչական գործընթացն առավել արդյունավետ կազմակերպել:

Ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, ձևակերպված է նպատակը, սահմանված են հետազոտության օբյեկտը, առարկան, խնդիրները և պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

Աշխատանքը բաղկացած է տիտղոսաթերթից, բովանդակությունից, ներածությունից, երկու գլուխներից, որոնք կազմված են ենթագլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Ընդհանուր ծավալը կազմում է 20 համակարգչային էջ:

Գլուխ1. Ժամանակակից ընտանիքում երեխաների դաստիարակության հիմնահարցերը

1.1 Ընտանիքի բնութագիրը

Ընտանիքը քաղաքակրթության արդյունք է, իսկ ավելի շուտ՝ քաղաքակրթության հիմք: Ընտանիքը եղել և տեսանելի ապագայում էլ կլինի աճող սերնդի դաստիարակության հիմնաքար:

Ընտանիքը, հասարակության զարգացման կարևորագույն սոցիալական և տնտեսական աղբյուր է: Այն գլխավոր հասարակական հարստության՝ մարդու վերարտադրողն է: Անձը, ծնվելով որպես կենսաբանական էակ, հայտնվում է սոցիալական միջավայրում, ուր նրա վրա միաժամանակ տարբեր գործոններ են ազդում: Երեխայի կյանքում առաջին շփումը ծնողների հետ է, ովքեր իրենց սիրով, ջերմությամբ, ճիշտ վերաբերմունքով նրան նախապատրաստում են կյանքի և աշխատանքի համար:

Ավանդաբար դաստիարակության գլխավոր ինստիտուտ է հանդիսանում ընտանիքը: Այն, ինչ երեխան ձեռք է բերում մանկության շրջանում, ամրապնդվում և պահպանվում է նրա մոտ հետագա ամբողջ կյանքի ընթացքում: Ծնողների հետ շփման ժամանակի սղությունը, փոխգործակցության սահմանափակումը, ընտանեկան դաստիարակության ավտորիտար ոճը ընտանիքում բարոյահոգեբանական և հուզական հարաբերությունների քայքայման պատճառ են դառնում, մինչդեռ դրանք ընտանեկան դաստիարակության արդյունավետության հիմնական այն պայմաններն են, որոնք անհրաժեշտ են երեխայի բնականոն զարգացման համար, և որոնց բացակայությունը կարող է հանգեցնել ներընտանեկան հարաբերությունների ճգնաժամի, կոնֆլիկտների առաջացման, օտարացման և սերունդների միջև կյանքի իմաստաձևավորող կապերի ընդհատման:

Ընտանիքի՝ որպես դաստիարակչական ինստիտուտի կարևորությունն այն է, որ այնտեղ երեխան անցկացնում է իր կյանքի մեծ մասը, և անձնավորության վրա ներգործության տևողությամբ ոչ մի դաստիարակչական ինստիտուտ չի կարող համեմատվել ընտանիքի հետ: Անհրաժեշտ է հաշվի առնել այն, որ ընտանեկան կյանքն ունի իր արտաքնապես երևացող և գաղտնի կողմերը, և դժվար է միանշանակ սահմանել կամ բնորոշել տվյալ ընտանիքը՝ ելնելով արտաքին բնութագրիչներից:

Ընտանիքը՝ որպես այդպիսին, ունի զարգացման երկարատև պատմություն և դարերի ընթացքում բազում փոփոխությունների է ենթարկվել՝ ելնելով հասարակական գիտակցությունից և ժամանակի պահանջներից: Սակայն որքան էլ ընտանիքը փոփոխվել է, այն երբեք չի կորցրել իր դերն ու նշանակությունն անձի կյանքում: Այսօր էլ, երբ հասարակությունը բազում փոփոխություններ է կրում, այն շարունակում է մնալ պետության կայունության հիմքը:

Ընտանիքի կյանքը պայմանավորված է տվյալ հասարակության կյանքի զարգացման առանձնահատկություններով: Այդ պայմանները որոշում են ընտանիքի գործառույթները և նշված են իրավաբանական ու բարոյական նորմերում: Յուրաքանչյուր ընտանիքին բնորոշ առանձնահատուկ որակներն արտացոլվում են ամենից առաջ նրա կենսագործունեության հիմնական ոլորտներում, որոնք գտնվում են սոցիումի տարատեսակ գործոնների մշտական ազդեցության ներքո: Իրենց հերթին դրանք արտահայտվում են ընտանիքի անդամների միջև փոխհարաբերություններում: Նրանք իրենց յուրահատուկ ազդեցությունն են թողնում յուրաքանչյուր անդամի մասնագիտական գործունեության արդյունավետության վրա:

Երեխաների արժեհամակարգի ձևավորման, ապագա հասարակության անդամի արժանավայել կերպարի կերտման համար դաստիարակության միջոցներն ու հնարները բազմազան են. այն վերահսկելու ճանապարհին անհրաժեշտ է լուծել հետևյալ խնդիրները՝ ուշադրության կենտրոնացում, համակարգված

մտածողության ձևավորում, ընտրություն կատարելու ընդունակություն, շրջապատող միջավայրի պատկերացումների ձևավորում, որոշումներ ընդունելու կարողություն, պատասխանատվության զգացում, ինքնուրույնություն և այլն:

Անգնահատելի է ընտանիքի դերը, քանի որ այստեղ է ծնվում երեխան, և այստեղ է սկսվում անձի ձևավորումը, զարգացումն ու դաստիարակությունը, այստեղ է երեխան յուրացնում սոցիալական դերերը, որոնք անհրաժեշտ են հասարակական գործունեությունն արդյունավետ իրականացնելու համար: Ընտանիքում երեխան առաջին անգամ հաղորդակցվում է մշակութային արժեքներին, յուրացնում հասարակական, վարքագծային նորմեր, կանոններ, այստեղ է իրականացվում երեխայի առաջնային սոցիալականացումը, հարմարումը կյանքին:

Եթե ծնողը խրախուսում է դրսից քարոզվող բացասական երևույթները, ազգային արժեհամակարգին խորթ և հաճախ անհարիր արժեքները, սոցիալական բացասական դիրքորոշումներ ձևավորվելու հավանականությունն ավելի մեծանում է, և, ընդհակառակը, եթե ծնողը քննադատում է անարժեք, ոչինչ չտվող հաղորդումները կամ ֆիլմերը, ապա միանգամայն հավանական է, որ երեխայի մոտ չձևավորվեն բացասական սոցիալական դիրքորոշումներ: «Ծնողները, խրախուսելով կամ հանդիմանելով, ամրապնդում կամ կասեցնում են տվյալ վարքի և արժեքային պատկերացումների ձևավորումը»:

Ըստ Ն. Նյուկոմբի՝ «Յուրաքանչյուր ընտանիք, յուրաքանչյուր ծնող իր երեխային դաստիարակում է յուրահատուկ անհատական մոտեցումներով: Դաստիարակության ընթացքի վրա շատ է ազդում ընտանիքի այս կամ այն մշակույթին պատկանելիությունը: Տվյալ հասարակության նորմերն ու արժեքները, սովորույթները, ծեսերը, շատ մեծ դեր են խաղում երեխայի դաստիարակության վրա»:

Ընտանիքում են դրվում երեխայի ֆիզիկական, բարոյական, գեղագիտական, մտավոր դաստիարակության հիմքերը, նրա մշակութային զարգացումը, որոնց իրականացման հարցում մեծ է ծնողների դերը՝ իրենց անձնային, բարոյական որակներով ու վարքագծով, կարևորվում է նրանց արժեքային համակարգը, որոնք երեխայի համար ընդօրինակման առաջին նմուշներ են: Երեխաները, ընդօրինակելով ծնողների վարքագծային մոդելները, համապատասխանեցնում են դրանք իրենց անձին, որի հիման վրա էլ ձևավորվում է վարքագիծը, արժեքային համակարգը: Յուրացնելով ընտանեկան մշակութային միջավայրի արժեքները՝ երեխան դառնում է հենց այդ արժեքների կրողն ու ժառանգորդը, որոնց հիման վրա էլ ձևավորվում է նրա աշխարհայացքը:

Ընտանիքը սերտորեն կապված է պետության ու հասարակության զարգացման հետ և շատ արագ արձագանքում է հասարակության մեջ տեղի ունեցող դրական և բացասական փոփոխություններին: Սակայն միշտ չէ, որ ընտանիքը գտնվում է համապատասխանության մեջ տվյալ դարաշրջանի սոցիալ-տնտեսական իրականության հետ: Ընտանեկան ավանդույթների կիրառումը այսօր չափազանց կարևոր է ժամանակակից ընտանիքի բարոյական հատկանիշների ամրագրման և կրտսեր սերնդի առողջ դաստիարակության տեսանկյունից:

Դաստիարակությունը կարևոր դեր ունի անհատի սոցիալականացման գործում: Դաստիարակությունը արժանավայել վարքագծի, բարոյական չափանիշների, կանոնների նպատակաուղղված փոխանցումն է ավագ սերնդից կրտսեր սերնդին ուսուցման միջոցով, (ծնողից՝ զավակին, ուսուցչից՝ աշակերտին, մեծից՝ փոքրին): Դաստիարակության նպատակը մարդու հոգևոր որակների և վարքագծի կատարելագործումն է, մարդու սոցիալ-մշակութային հասունացմանը նպաստելը: Դաստիարակության արդյունքներով են դատում անհատի հասունացման, բարեկրթության աստիճանի, ինքնատիրապետման և այլ բարձր արժանիքների մասին:

Դաստիարակության առաջին օջախը ընտանիքն է, երկրորդը՝ դպրոցը: «Պատահական չէ, որ բոլոր մշակույթներում էլ մեծ ուշադրություն են դարձրել ընտանիքի և դպրոցի հիմնախնդիրներին, դրանցում մարդու ստացած կրթությանն ու դաստիարակությանը»:

1.2 Ընտանիքի տեսակները

Առանձնացնում են ընտանիքի բազում տեսակներ, որոնցից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկությունները և խնդիրները: Ընտանիքի այս կամ այն տեսակին պատկանելը միշտ իր դրական կամ բացասական ազդեցությունն է թողնում երեխայի սոցիալականացման գործընթացի, երեխայի զարգացման, ճանաչողական գործունեության ընդլայնման վրա:

Սովորաբար ընտանիքի տեսակները դասակարգվում են ըստ կառուցվածքի: Առավել ընդունված է տարբերակել ընտանիքի երկու հիմնական տեսակ՝ միջուկային և ընդլայնված:

Ժամանակակից ընտանիքների հիմնական տիպը նուկլեար կամ միջուկայինն է, երբ մեկ հարկի տակ ապրում են հայրը, մայրը և երեխաները: Պատահում են նաև նուկլեար ընտանիքներ, որոնք կազմված են մեկ ծնողից և երեխաներից, քանի որ ըստ վիճակագրական տվյալների, ամեն տարի տեղի ունեցող ամուսնալուծությունների քանակը գերազանցում է ամուսնությունների թվին:

Ի տարբերություն նուկլեար տիպի, գոյություն ունի մեկ այլ տիպ, որը կոչվում է ընդլայնված: Այս ընտանիքում ապրում են հայրը, մայրը, երեխաները, ինչպես նաև տատիկ-պապիկները, հնարավոր է նաև հորեղբայր, հորաքույրները: Այս տիպի ընտանիքը ավելի շատ հանդիպում է գյուղական վայրերում, ուր ավանդույթները պահպանվում են սովորույթի ուժով:

Ժամանակակից ընտանիքի առաջնային ձևը և հիմքը նահապետական ընտանիքն է, որին բնորոշ է տղամարդու գերիշխանությունը ընտանիքում:

Հասարակության զարգացմանը զուգընթաց ավանդական նահապետական ընտանիքը փոփոխվում է և ընտանիքում կանանց դերակատարումը մեծանում է: Նահապետական ընտանիքների թիվը ներկայումս նվազում է: Փոխվում են ավանդական դերերը, երբ կինը ղեկավարում է տնային տնտեսությունը և երեխաներ է դաստիարակում, իսկ ամուսինը ապահովում է ընտանիքի տնտեսական անկախությունը: Ընտանիքում նկատվում է ամուսինների հավասարության, փոխադարձ պատասխանատվության հաստատման միտում: Զարգանում է գործընկերային տիպի ընտանիք, որտեղ մեծանում է կնոջ հեղինակությունը որպես մարդ, մայր, կին: Նման ընտանիքը ներառում է ամուսինների կողմից տնային տնտեսության համատեղ կառավարումը, երեխաների դաստիարակությունը և փոխադարձ աջակցությունը: Նման ընտանիքի կյանքը կազմակերպվում է նրա բոլոր անդամների մասնակցությամբ:
ՈՒրբանիզացման գործընթացների հետ կապված՝ հարազատների միջև կապերը թուլանում են: Գնալով քչանում է բազմասերունդ (ընդլայնված, ազգակցական) ընտանիքը, որը ներառում է ամուսինների և երեխաների հետ մեկտեղ այլ հարազատներ, (տատիկներ և պապիկներ և այլն), որտեղ 2-3 սերունդների ներկայացուցիչներ վարում են համատեղ տնային տնտեսություն և կազմակերպում ընտանեկան առօրյան:
Ներկայումս աճում է ամուսնալուծությունների, կրկնամուսնությունների, կիսատ ընտանիքների, լքված երեխաների թիվը:
Ամուսնալուծության պատճառներից հետազոտողները առաջին հերթին առանձնացնում են ամուսնությանը անպատրաստ լինելը:
Առաջին տարիներին ընտանեկան կյանքը հատկապես խոցելի է: Այս պահին ձևավորվում են ամուսնական հարաբերություններ՝ որոշվում է դերերի բաշխման հարցը, ձևավորվում են հոգևոր կապեր: Այս շրջանը հեշտ չէ, քանի որ երիտասարդ ամուսինները դաստիարակվել են տարբեր ավանդույթներով, յուրաքանչյուրը կարող է ունենալ իր սեփական հայացքները ամուսնության, ընտանիքի, տնային տնտեսության, հանգստի և երեխաների դաստիարակության վերաբերյալ: Սերը միշտ չէ, որ օգնում է հաղթահարել

առաջացող կոնֆլիկտային իրավիճակները: Վիճակագրության համաձայն՝ ամենափխրուն ամուսնությունները վաղ ամուսնություններն են:

Ամուսնալուծության այլ պատճառներից են կոպտությունը, հարբեցողությունը, ֆիզիկական բռնությունը, դավաճանությունը և այլն:

Ժամանակակից հասարակության մեջ մեր պետությունը շահագրգռված է ընտանիքի ամրապնդմամբ: Այդ նպատակով կառավարությունը հատուկ միջոցներ է ձեռնարկում՝ ուղղված ծնելիության մակարդակի բարձրացմանը և ընտանիքներին աջակցելուն:

Գլուխ 2. Ընտանեկան կոնֆլիկտների տեսակները և դրանց պատճառները

2.1 Ընտանեկան հոգեբանություն, կոնֆլիկտներ

Երեխայի սոցիալականացման գործընթացն առաջին հերթին ընթանում է ընտանիքում՝

սոցիալական դերերի, արժեքների յուրացման և սեփական վերաբերմունքը մշակելու, անհատական առանձնահատկություններն իրագործելու միջոցով: Հետևաբար, դպրոցական կյանքում ծագող խնդիրների նկատմամբ երեխայի վերաբերմունքի մեջ գերակշռող մաս են կազմում ընտանեկան միջավայրում ձեռք բերած սոցիալական դիրքորոշումները, որոնք նպաստում կամ խոչընդոտում են վախերի, տագնապների դրսևորմանը:

Ընտանիքի կառուցվածքը, քանակական կազմը, ծնողական դաստիարակության ոճը, ներընտանեկան հարաբերությունները ձևավորում են աշխարհի հանդեպ վստահության կամ անվստահության առաջնային հիմնային մակարդակ, ինչը կարևոր դեր և նշանակություն ունի վախերի դրսևորման և կանխարգելման գործընթացում:

Ընտանիքի սոցիալ-հոգեբանական համակարգի և կրտսեր դպրոցականի վախերի հինախնդրին անդրադարձել են մի շարք փիլիսոփաներ, հոգեբաններ, հոգեթերապևտներ, որոնց ներդրումն արժևորելով, ներկայացրել ենք մեր մոտեցումը՝ կարևորելով դպրոցական վախերի դրսևորման վրա հատկապես ծնողական վերաբերմունքի ազդեցությունը, ինչը դիտարկվում է որպես երեխայի հետ հաղորդակցվելու ընթացքում կիրառվող վարքաձևերի, նրա անհատականությունը, բնավորությունն ու արարքներն ընկալելու և հասկանալու առանձնահատկությունների համակարգ:

Երեխայի անձի ձևավորումն առաջին հերթին տեղի է ունենում ընտանիքում, և ընտանեկան մթնոլորտը, հարաբերությունները, դաստիարակությունը վճռորոշ ազդեցություն են ունենում երեխայի ներդաշնակ զարգացման և հոգեկան առողջության վրա: Ընտանիքում ձևավորվում են երեխայի բնավորությունը,

ինքնագնահատականը, բարոյական պատկերացումները, սոցիալական դիրքորոշումները, երեխան յուրացնում է վարքի կանոնները, տեղի է ունենում անձի սոցիալականացում: Վերջին ժամանակներում ընտանեկան հարաբերություններն էական փոփոխությունների են ենթարկվել: Ավելացել է նուկլեար՝ ամուսիններից և երեխաներից կազմված ընտանիքների թիվը: Փոխվել են ընտանիքում ամուսինների ֆունկցիաները, նրանց արժեհամակարգը, վերաբերմունքը երեխաների նկատմամբ, դաստիարակության մեթոդները:

2.2. Ընտանեկան կոնֆլիկտների ազդեցությունը երեխայի անձի ձևավորման վրա

Շատ կարևոր է ուսումնասիրել ընտանեկան հարաբերություններում տեղի ունեցող տեղաշարժերը, ընտանեկան կոնֆլիկտների առաջացման պատճառները և դրանց ազդեցությունը երեխայի անձի ներդաշնակ ձևավորման վրա: Գոյություն ունի <կոնֆլիկտ> հասկացության մի քանի սահմանում: Բ. Մ. Ռեբուսը կոնֆլիկտը բնութագրում է որպես մարդկանց գիտակցության մեջ միմյանց հանդեպ հակադարձ ուղղված և անհամատեղելի միտումների բախում՝ կապված բացասական սուր հուզական ապրումների հետ»:

Ըստ Ա. Վ. Սերգեյչուկի՝ կոնֆլիկտը անհատների անհամատեղելի նպատակների, հետաքրքրությունների, դիրքորոշումների, կարծիքների, հայացքների բախում է»:

Ի տարբերություն Ռեբուսի և Սերգեյչուկի՝ Ա.Մ.Ստոլյարենկոն կոնֆլիկտը բնութագրում է ոչ թե որպես բախում, այլ հակասություն. <<Կոնֆլիկտը երկու և ավելի մարդկանց (խմբերի) միջև սուր և դժվար լուծվող հակասություն է, որը բնութագրվում է հակամարտությամբ, հակասող կողմերի կողմից ուժեղ միջոցների փոխադարձ կիրառմամբ՝ հակառակ կողմին հաղթելու նպատակով>>[6, էջ 294]:

Ըստ վիճակագրական տվյալների ընտանեկան կոնֆլիկտների պատճառները հաղորդակցման կուլտուրայի, փոխադարձ վստահության,քաղաքավարության, ուշադրության, բարյացակամության, նրբազգացության բացակայությունն են:

Իրականում կոնֆլիկտների պատճառ կարող են հանդիսանալ հոգեբանական անհամատեղելիությունը, սեռական խնդիրները, միմյանց մտադրությունները չհասկանալը, վարքի սխալ մեկնաբանությունները, բարոյականության վերաբերյալ տարբեր մոտեցումները, պարտքի և պատասխանատվության զգացումի բացակայությունը և այլն:

Ընտանիքն ամուր է այն ժամանակ, երբ զույգերի միջև ստեղծված են բարիդրացիական հարաբերություններ, երբ ազատ քննարկվում են տարբեր թեմաներ, երբ ամուսիններն ունեն ընդհանուր հետաքրքրություններ, ընդունակ են ապրումակցման, զիջող են և ամենակարևորը, երբ ընտանիքի հիմքում սերն է:

Կոնֆլիկտը կարող է պայմանավորված լինել նաև ընտանեկան հարաբերությունների ճգնաժամով: Առաջին ճգնաժամն ի հայտ է գալիս ամուսնության առաջին տարում, երկրորդը՝ 3-7-րդ տարում, երրորդը՝ 17-25-րդ տարում:

Կարևորելով ընտանիքի և ընտանեկան հարաբերությունների դերը երեխայի անձի ներդաշնակ ձևավորման վրա, հարցման միջոցով, որին մասնակցել է ընդլայնված և միջուկային ընտանիքների 25 ամուսնական զույգ, բացահայտվել է կոնֆլիկտների առաջացման հաճախականությունը:

Փաստորեն ընդլայնված ընտանիքներում կոնֆլիկտներն ավելի հաճախ են ծագում, քան միջուկային ընտանիքներում:

2.3 ԵՐԵԽԱՅԻ ՊԱՀՎԱԾՔԸ, ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ և ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

Ցանկացած կոնֆլիկտ երեխան կարող է ընկալել որպես սիրո բացակայություն, անգամ օբյեկտիվ քննադատությունը կամ սխալ վարքագծի մատնանշումը՝

ուղղված իր հասցեին: Հետևաբար ծնողների վեճերը սիրո բացակայության, հուսահատության, անպաշտպանության, տագնապի զգացման հիմք կարող են հանդիսանալ: Երբեմն հայրն ու մայրն ուրիշների մոտ ձևացնում են՝ երջանիկ են և հաշտ, իսկ տանը լիովին հակառակ պատկերն է լինում: Ծնողների կողմից հարգանքի կամ սիրո ծայրահեղ տարբերվող ցուցադրությունների դեպքում երեխան ծնողներին վերագրում է անարդարության, ստախոսության հատկանիշներ և կասկածում է ծնողների՝ իր հանդեպ սիրուն, ազնվությանը, նվիրվածությանը, առաջանում է հիասթափություն, և աշխարհի հանդեպ ձևավորում է կասկածամիտ վերաբերմունք: Սա խաթարում է հարաբերությունների կառուցման հմտությունների ձևավորումը, կարող է առաջ բերել շեղվող վարքագիծ:

Իհարկե, հարաբերություններն առանց կոնֆլիկտի հնարավոր չեն: Խնդիրը կոնֆիկտների լուծման տարբերակների, հուզականության դրսևորումների չափի մեջ է: Մարդիկ տարբեր են, խառնվածքներն ու արձագանքները՝ նույնպես: Կոնֆլիկտային իրադրության մեջ կարևոր է յուրաքանչյուրի դերը: Երեխաներն իրավունք ունեն արտահայտել իրենց կարծիքը և որոշակի դեր խաղալ խնդրի լուծման գործում: Դա կարող է լինել մեկ նախադասություն, օրինակ՝ «Ինձ դուր չի գալիս այս իրավիճակը» կամ «Ես վատ եմ զգում, երբ ձեզ տեսնում եմ այսպիսին»: Սա կարող է տանել լիցքաթափման, իրադրությանը գիտակցաբար մոտենալուն: Պատահում է նաև, որ երեխաների կարծիքը անտեսվում է, ընտանիքի անդամները գտնվում են սուր կոնֆլիկտային իրադրության մեջ, և երեխային սթրեսից խուսափելու համար մնում է պարզապես հեռու կանգնել իրադրությունից: Իհարկե, այս դեպքում էլ անտարբերություն է առաջանում: Ելքը մեծահասակների գիտակցական մոտեցումն է:

Եզրակացություն

Հիմնախնդիրը հանգամանորեն ուսումնասիրելով, վերլուծելով համապատասխան գրականությունը, հանգեցինք հետևյալ եզրակացություններին.

Դպրոցական տարիքը ամենակարևոր շրջանն է անձի կայացման և զարգացման համար, այն կախված է երեխային շրջապատող ֆիզիկական և սոցիալական միջավայրից, դրանք են՝ ընտանիքը, դպրոցը, ընկերները: Կարևորագույն բնութագրերից է ինքնուրույնությունը, որին նպաստում են ծնողները:

Այսպիսով, ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ դպրոցականների համար մեծ են ընտանիքի դաստիարակչական ներուժի հետևյալ ընդհանուր բաղադրիչները՝

Ներընտանեկան հարաբերությունները

Ծնող–երեխա դերային հարաբերությունները

Ծնողների բարոյական օրինակը

Ընտանիքի կազմը, նրա կենսագործունեությունը

Երեխաների դաստիարակության համար ծնողների պատասխանատվության աստիճանը

Ծնող–երեխա արդյունավետ փոխգործակցության վրա ազդող գործոններից են՝ ընտանիքի տիպերը, դաստիարակության ոճերը, ծնողների հարաբերությունները, ընտանեկան կոնֆլիկտները:

Ընդհանրացնելով կատարած աշխատանքը՝ պետք է եզրակացնել, որ ընտանիքի անառողջ մթնոլորտը, ամուսինների կոնֆլիկտային հարաբերությունները միանշանակ բացասական ազդեցություն են գործում երեխայի վրա: Երեխան, որը մշտապես գտնվում է լարված, սթրեսային

վիճակում, ունենում է ծանր բնավորություն, չի կարողանում կապեր հաստատել հասակակիցների և մեծահասակների հետ, ունենում է ոչ ադեկվատ, ցածր ինքնագնահատական:

Ցանկացած ընտանիքում վեճերն ու կոնֆլիկտներն անխուսափելի են, ուստի յուրաքանչյուր մեծահասակ ամուսնական զույգ պետք է սթափ գիտակցի, որ պատասխանատվություն է կրում ձևավորելու և դաստիարակելու առողջ երեխա:

Այդ պատճառով ընտանիքում պետք է.

1.Կոնֆլիկտների թիվը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում դրանց արագ լուծում տալ:
2.Ընտանիքում ստեղծել խաղաղ, հանգիստ մթնոլորտ՝ երեխայի ֆիզիկական և հոգեկան զարգացման համար՝ հիմնված սիրո և հարգանքի վրա

Գրականություն

1. Սեդրակյան Ս.Ա. Ընտանիքի հոգեբանություն. Երևան: Ուրարտու համալս., 2010, 456 էջ:

2. В.Х. Мирзоян : Виды семейных конфликтов и их воздействие на формирование.

3. Ильин Е.П. Дифференциальная психофизиология мужчины и женщины. СПб.:

Питер, 2003. – 544с.

4. Лобан Н.А. Конфликтология : УМК – Минск.: Изд-во МИУ, 2008. 471с.

5. Ребус Б.М. Психологические основы управления школой. – Ставрополь.: СГПИ.

1990.

6. Сергейчук А.В. Социология управления. – СПб.: Бизнес-пресс, 2002. 240с.

7. Столяренко А.М. Общая и профессиональная психология. – М.: ЮНИТИ-ДАНА, 2003. 382с.

8. Кулик Л.А., Семейное воспитание: Учебное пособие / Л.А. Кулик – М.:

Просвещение 2003